

## ՓՈԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ԽՄԲԱԴՅՐԱԿԱՆԻ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅ. ԵԿԵՂԻՑԻՈՑ<sup>(\*)</sup>

Հայոց Եկեղեցին իր պատմական կեանքի ընթացքում բարեփոխուել է Հայ կեանքի զարգացման համընթաց, ինչպէս վկայում են Ազգային-Եկեղեցական ժողովների կանոնները. Այս երեսյթը նրա կենսունակութեան նշանակն է և կենդանութեան ապահովությունը. Հայ Եկեղեցու բարենորոգութեան խնդրով նորազոյն ժամանակներում առաւելապէս զբաղուել է Հայ մամուլը, որ սակայն սիստմի վերածած ամբողջական զործ չի տուել, այլ շօշափել է մասնական երեսյթներ, պահանջելով ժամանակակից կեանքի համապատասխան ձևակերպում տալ նոցաւ Վերջերս՝ 1917 թուից մկանած՝ այդ հարցով յատկապէս զբաղուեցաւ Ս. Էջմիածնը, երբ Ռուսական Փետրուարեան առաջին յեղափոխութիւնը տապալեց Յարական ուժիմը և ազատութիւն խոստացաւ կեանքի բոլոր ասպարեզներին. Եկեղեցին նարաւորութիւն ստացաւ իր բարենորոգութեան խնդիրները աւելի լայն չափով լուծելու փորձեր անել, և հէնց այդ թուին էլ Ամենայն Հայոց Հայրապետը՝ Էջմիածնի միարանութեան խնդրանօք՝ հրաւիրեց Էջմիածնում Խոսանայ հոգևորականութեան համագումար՝ յատկապէս զբաղուեյու Եկեղեցական բարենորոգութեան խնդիրներով, որի աշխատանքը նիւթ պիտի ծառայէր Ազգային-Եկեղեցական ժողովին, որի մօտակայ գումարը անհրաժեշտ էր համարում ինչպէս Էջմիածնի՝ նոյնպէս նաև Հայ Եկեղեցական համայնքների կողմից:

Յիշեալ ժողովը գումարու եցաւ մասնակցութեամբ 67 հոգեորականների և տեեց 11 օր, և ուր՝ Հայոց Եկեղեցու բարենորոգութեան վերաբերեալ բազմութիւ խնդիրներ քննուեցան և ամբողջ աշխատանքը ներկայացուեցաւ Վեհափառ Հայրապետի տնօրինութեան.

Ամենայն Հայոց Հայրապետը, տեսնելով որ Ազգային-Եկեղեցական ժողովի գումարումը կարող է շատ ուշանալ, անհրաժեշտ համարեց մի քանի կարեսր խնդիրների մասին պաշտօնապէս իմասնալ Տանն Կիլիկիոյ Ենորհազարդ Կաթողիկոսի, Երուսաղէմի և Կոստանդնուպոլսի Ամենապատիւ Պատրիարքների և կ. Պոլսի Կեղրոնական ու Կրօնական ժողովների կարծիքները, և ապա հրատարակեց հետեւալ Հայրապետական կանոնական կոնդակները.

Ա. — 1922 թ. Նոյեմբերի 11ին՝ թ. 644, որով արտօնում է այրի քանանաների կրկնամունութիւնը:

(\*) Ամենայն այս թիւն սկսեալ, փախան մերաբրականի, հրատարակութեան կու տանք Ս. Արքույթ մեծանուն Պատրիարքներէն Թորգում Արքեպոս. Գուշակեանի մարեկարգութիւն Հայց. Եկեղեցւոյ գրքէն կարեսր մասեր (լոյս տեսած նաև. Ամենայի 1937-38 տարիներու թիւնուն մէջ). Ակատի առած հոն շօշափուած հարցերուն կարեսրութիւնը: Հարցեր՝ մօտ կէս գար առաջ արծարծուած, որոնք մինչեւ այսօր ալ կը պահեն իրենց այժմէականութիւնը և պիտի քննարկէին նաև յառաջիկայ տարի Մայր Աթոռոյ մէջ գումարուելիք եաբուկպառաց ժողովին: Տարբեր կը բանանք Զնկուցումով՝ որով Երանաշնորհ 8. Խորէն Մուրաբէդեան Ամ. Հայոց Կաթողիկոսը, յարակից Կոնդակով մը, հարցը կը դնէր պաշտօնական գետնի վրայ:

Բ. — Նոյն թուականին՝ թ. 645, որով թոյլատրում է ազգակցական հինգերորդ և խնամիական չորրորդ աստիճանի պսակները, այլև վերացնում է ամուսնութեան վերաբերմամբ հոգեռո ազգակցութեան ամէն տեսակ արգելքներ։

Գ. — 1923 թ. նոյեմբերի 9ին՝ թ. 349, որով ընդունում է նոր Տումարը և պատուիրում նրանով առաջնորդուել։

Դ. — Նոյն թուականին՝ թ. 350, որով թոյլատրում է հայ Եկեղեցիներում ժամապաշտութեան ժամանակ երգենուի գործածութիւն։

Այս կարգի կոնդակներից է նաև 1917 թուի Ապրիլի 7ի թ. 678ը, որով վերահաստատում է ընտրական թեմական պատգամաւորական ժողովներ ու թեմական խորհուրդներ, վերականգնում է բոլոր Եկեղեցական պաշտօնեաների ժողովրդական ընտրական սկզբունքը և վերահաստատում կանանց սեռի ընտրական իրաւունք՝ այր մարդկանց հաւասար։

Ազգային - Եկեղեցական ժողովին է վերապահուած՝ Հայ Եկեղեցում ընդունուած կարգի համաձայն Հայրապետական կանոնական կոնդակներն ընդունել, եթէ նա կամենում է եղած որոշումները Հայ Եկեղեցու համար հասաւատուն կանոն գարձնել։ Այսպէս վարուեցաւ 447 թուին գումարուած Շահապիշանի ժողովը, որ ընդունեց Տիեզերական առաջին երեք ժողովները, որով նոցականուները և դաւանական սահմանութիւններ պարտագիր նշանակութիւն ստացան մեր Եկեղեցու համար։

Ամենայն Հայոց Հայրապետը, Գերազին Հոգեռո Խորհրդի համազործակցութեամբ, կամենալով Հայ Եկեղեցու բարենորոգութեան խնդիրը հիմնաւոր և լայն ծրագրով հանդէս բերել գումարուելիք Ազգային - Եկեղեցական ժողովի առաջ, 1923 թ. Յուլիսին հաստատում է «Հայոց Եկեղեցու Բարեկարգութեան կեղրոնական Յանձնաժողով», որի մշակած հարցարանը ուղարկում է Համամիութեաների և զաղութային թեմերին, ժողովական կործիքներ լսելու և ուսումնասիրութիւններ ստանալու նպատակով։ Հայոց լանի արծարծած խնդիրները խնդիրն վկայում են, որ կեղրոնական Յանձնաժողովը ունեցել է բարենորոգչական լայն ծրագիր, ինչպէս են՝ 1. Ժամազրքի կրծատումն և բարեփոխումն. 2. Ծիսարան - Մաշատոցի կրծատում և բարեփոխում. 3. Ճաշոցի կրծատում և բարեփոխում. 4. Տօնացոյցի կրծատում և բարեփոխում. 5. Հայոց Եկեղեցու ընդհանուր սահմանադրութեան մշակում և այլ հարցեր։

Գերազին Հոգեռո Խորհրդը, նկատի առնելով ամենուրեք հայ կեանքի, մանաւանդ Եկեղեցական կեանքի անքնական պայմանները, այլև այն հանգամանքը, որ զաղութահայութիւնը՝ մեզ է՝ որ յայտնի և է՝ որ անյայտ պատճառներով, փոքրաթիւ պատգամաւորներով է մասնակցում այս ժողովին, նպատակայարմար չի գտնում հանդէս զալ լայն ծրագրով, այլ իր ծրագիրը սահմանափակում է կարեռազոյն խնդիրներ միայն արծարծելով։

Եկեղեցական բարենորոգութեան լայն ծրագիրը պիտի շօշափէր քրիստոնէական կեանքի բոլոր արտայայտութիւնները. սակայն այժմ պիտի բաւականանք միայն արծարծելով՝ Ա) Ծիսական - արարողական խնդիրներ և Բ) Ընդհանուր հարցեր, որոնք լուծման են կպօտում։

### ՆԻՍԱԿԱՆ - ԱՐԱԲՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

**Ա.** — Ժամակարգութիւն. — Հայ Եկեղեցու աստուածպաշտութիւնը ունի իր այլնայլ արտայայտութիւնները, որոնցից մէկը Եկեղեցու ժամակարգութիւնն է։ Հայ Եկեղեցու ժամակարգութիւնը, ընդհանուր Քրիստոնէական Եկեղեցու ազդեցութեան ներքոյ և ժամանակի ողու և հայեացքների թելադրութեամբ, գարերի ընթացքում հետղնետէ փոխուել է բարդանալով և ստացել է այսօրուայ պատկերը։ 1. Գիշերային ժամ։ 2. Առաւտօտեան ժամ։ 3. Արեւադայի ժամ (այժմ միայն Մեծի Պահոց օրերին է կատարուում)։ 4. Ճաշու ժամ, երեք մասի բաժանուած ժամերգութեամբ, այն է երրորդ, վեցերորդ և իններորդ ժամերին կատարուող, որ այժմ միացած է կատարուում։ 5. Երեւական ժամ։ 6. Խաղաղուկան ժամ և 7. Հանգստեան ժամ։ Ժամականակի պահնչը ստիպել է աղօթքի պահերը սղելու և իննը պահը դարձել է երեք։ 1. Առաւտօտեան, 2. Ճաշու և 3. Երեւական։ Առաջին երեք պահերը միացել են և կազմել են Առաւտօտեան ժամ, ճաշու և երեք ողորմեանները Ս. Պատարագի հետ՝ ճաշու ժամ, և վերջին երեքը միանալով կազմել են Երեւական ժամ։

Նկատի առնելով այս հարցի մասին կեդրոնական Յանձնաժողովի անունով թեմերից ստացուած առաջարկները, 1917 թուի կուսակրօն և աշխարհիկ հոգևորականութեան համազումարի սրոշութեան երեսում արծարծուս ծկարիքները, հետևեալ ամփոփումը կարելի է տալ. — Ընդառաջելով ներկայ կեանքի պահանջներին, փոփոխութեան ենթարկել Հայ Եկեղեցու ժամակարգը, դեկավարուելով միօրինակութեան և առաքելական Եկեղեցու պարզութեան սկզբունքներով։ ըստ այսմ՝ 1. Վերացնել լուր օրերի ժամասացութիւննելը, ինչպէս եղել է Քրիստոնէական Եկեղեցու մէջ մինչև երրորդ դարու վերջերը։ 2. Ժամասացութիւն կատարել միայն Կիւրակէ և տօն օրերին։ 3. Գիշերային և առաւտօտեան ժամերգութիւն կատարել միայն կիւրակէ և տօն օրերին, ստկայն կրծատումներով։ 4. Արեւագալի ժամերգութիւնը պահել միայն մեծի պահոց օրերին։ 5. Վերացնել մեծի պահոց օրերի Ճաշու ժամը և պահել միայն Ս. Պատարագ մատուցուելիք օրերին, այն ևս՝ Պատարագին կից։ 6. Ամէն կիւրակէ և տօն օրերին Պատարագ մատուցանել։ 7. Երեւական ժամերգութիւնը թողնել անփոփոխ, և կատարել միայն Շաբաթ և կիւրակէ օրերին։ 8. Խաղաղական ժամերգութիւնը նոյնպէս պահել մեծի պահոց երեւական, բայց կրծատել։ 9. Հանգստեան ժամերգութիւնը անփոփոխ պահպանել, սակայն կատարել միայն արտակարգ դէպքերում, ինչպէս այժմ սովորութիւն է։ Այս հարցի արծարծումը ժողովի առաջ է դնում Ասենի ժամազգրքի վերաբարազրութեան խնդիրը։ Գիշերազոյն Հոգևոր Խորհուրդը կը պարզէ իր տեսակէտը, ինչպէս այս նոյնպէս նաև պաշտամունքի միւս մասերի նկատմամբ։ Երբ զեկուցման պաշտամունքի մասը ամբողջանայ, այլապէս ասած՝ իր տեսակէտը կ'արտայայտէ Ասենի ժամագրքի, Տօնացոյցի, Ճաշոցի և Մաշտոցի կրծատումների և վերամբազրման մասին։

**Բ.** — Եկեղեցական օնեներ. — Հայ Եկեղեցու ժամակարգութեան նման՝ Հայ Եկեղեցու տօներն էլ հետղնետէ են զարգացել ընդհանուր Քրիստոնէական

Խկեղեցու ազդեցութեամբ և հետեւողութեամբ։ Տօների զարգացումը պատճառ է եղել ամէնօրեայ աստուածապաշտութեան կարգի առաջ զալուն։ Թէ՛ 1917 թուի հոգեւորականների համագումարը և թէ՛ Կեդրոնական Յանձնաժողովի թեմերից ստացած զրութիւնները կողմանակից են տօների կրճատման, և առաջարկում են տօների ընտրութիւնը հետեւեալ սկզբունքներով կատարել։ 1. Պահել այն Տէրունական տօները, որոնք Փրկչի կեանքի և զործունէութեան շեշտուած մոմենտներն են պատկերացնում։ 2. Պահել այն սրբոց տօները, որոնք համարքիստոններ կամատունէական կամ Հայկական բնոյթ և արժէք ունին։ 3. Համախիրումներ կատարել՝ մարզարէից, հայրապետաց, մարտիրոսաց և մի օր Էլ նուիրել Ամենայն սրբոց տօներին։ Այս հարցի արծարծման հետ կապուած է Տօնացոյցի վերախմբաղրման ինդիրը։

Գ. — Եկեղեցական Խորհուրդներ եւ Արքազան Արքունութիւններ։ — Կեդրոնական Յանձնաժողովի անունով թեմերից ստացուած զրութիւնները նշում են Խորհուրդների արարողական մասի կրճատման անհրաժեշտութիւնը, ոմանք նաև կրճատուելիք հատուածները։ Խոկ սրբազան արարողութիւնների նկատմամբ, որոնք բաւականաչափ հեթանոսական սովորութիւնների դրոշմ են կրում, առաջարկում է հանել Մաշտոցից։ Այսպէս օրինակ 1. Կանոն զիշերային ժամու աղօթից, որ կատարի ի վերայ ծանր հիւանդաց, ի թժշկութիւն ցաւոց և ի թողութիւն յ անցանաց։ 2. Կանոն դժուարածին յլի կնոջ ։ 3. Կանոն վասն այսահարաց և լուսնոտակից։ 4. Կանոն նորոգ սափերելոյ զներս պատանւոյն։ Եւ այսպէս այլ կանոններ, որոնց մեծ մասը այսօր այլեւս չի կատարւում։ Այս հարցերի արծ սրծմամբ Մաշտոց - Ծիսարանի վերախմբաղրման հարցն է դրում սեղանի վրայ։

Դ. — Ճաշոյի կրնաման խնդիր։ — Ճաշոյ զիրքը պարունակում է տարուայ բոլոր տօների օրերին կարգացուելիք զրքերն ու աւետարանները։ Նաև մեծ տօների նշանակութիւնը լուսաբանող գասական հայրերի թղթերն ու աղօթքները։ Ընդհանուր կարծիք է եղել և է այսօր՝ կրճատել չափազանց երկար ընթերցուածները, որոնք առանց այն էլ երկար ժամասացութիւնը եւս առաւել երկարացնում են, յոզնեցնելով և ձանձրոյթ պատճառելով աղօթաւորներին, փոխանակ նոցա միիթարելու և ոգեւորելու։

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը ժամակարգութեան, տօների, խորհուրդների ու սրբազան արարողութիւնների և ընթերցուածների կրճատման հարցը, այլապէս սամած Ատենի ժամապրքի, Տօնացոյցի, Ճաշոյի և Մաշտոցի վերախմբաղրման հարցը՝ համարում է կարեւոր և հասունացած։ Սակայն նկատի առնելով, որ Եկեղեցու պաշտամունքը, յիշատակուած բոլոր մասերով, այլ և այլ ժամանակների, ուրեմն և այլ և այլ աշխարհահայեացքների և կենցաղական պայմանների ծնունդ է և հետզնեաէ զարդացել, կարեւոր է ուսումնասիրել նոցա ժագման և զարդացման պատմութիւնը, որ կրճատումները հիմնաւոր լինին և սխալներից ազատ։ Աւստի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը կ'առաջարկէր նշել այժմ կրճատման և վերախմբաղրման հիմնական սկզբունքները և կը յանձնարարէր կեդրոնական թարձրագոյն Հոգեւոր իշխանութեան, որ նա մասնա-

զէտ անձանց ձեռքով, ժողովի նշած սկզբունքների համաձայն, ուսումնասիրել տայ հարցը, ապա այդ ուսումնասիրութիւննելը տպագրել տայ, որ Տանն կիլիկիոյ Կաթոլիկոսը, Երուսաղէմի և Կ. Պալայ Պատրիարքները, թեմակալ առաջնորդները, հայ մամուլը և թեմական Երեսփոխանական ժողովները քննարկեն, և ապա թէ դործադրութեան ուսնկցիա ստանայ Ամենայն Հայոց Կաթոլիկոսից Հայրապետական կոնդակով, եթէ միայն հնարաւոր չի լինի յատուկ այդ նպատակով Ազգային - Եկեղեցական ժողով գումարել:

### Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Հ Ա Ր Ծ Ե Ր

**1.** — Հայ հոգեւորականութեան ցենզի խնդիր. — Ներկայ հոգեւորականութիւնը միայն մի կոչում և մի նպատակ ունի, այն է՝ հանդէս գալ իրեն Աւետարանի քարոզիչ, գասահարակել հայ ժողովրդին քրիստոնէական ողով և Եկեղեցու վերածնութեան ուղին հարթել: Այս նպատակին ծառայելու համար, նոր հոգեւորականութիւնը զինուած պիտի լինի նորագոյն զիտութեամբ, ունենայ փիլիսոփայական և քրիստոնէական լայն աշխարհահայեացք: Նա հիմնականորէն ծանօթ պիտի լինի ներկայ բնական զիտութիւնների, իմաստասիրութեան և սոցիալական զիտութիւնների եղանակացութիւններին, ուսումնասիրած լինի կրօնների և ընդհանուր ազգերի պատմութիւնը, իւրացրած լինի քրիստոնէական կրօնի հիմնական սկզբունքները և այն՝ իր կեանքի առողջնորդ և ղեկավար ճանաչ: Նոր հոգեւորականութիւնը, մանաւանդ բարձր հոգեւորականութիւնը, կարողութիւն պիտի ունենայ ըմբռնելու իր ժամանակաշրջանի ողին և ուղղութիւնը, պիտի հասկանայ թէ ուր է զնում ընդհանուր շարժումը, և իրեն յանձնուած նաւի զեկը այնպէս ուղղէ, որ նաւը խաղալիք չդառնայ ժամանակի տարրութեր հոսանքներին: Եւ ահա այս նպատակին ծառայելու համար նոր հոգեւորականութիւնը պիտի ունենայ բարձրազոյն կրթութիւն՝ ընդհանուր և մասնագիտական բնոյթ կրող: Մօտաւորապէս այս տեսակէտն ունին նաև 1917 թուրի հոգեւորականների համագումարը և Կեղրոնական Յանձնաժողովին թեմերից ուղղուած պատասխանները:

**2.** — Կուսակրօն հոգեւորականութիւն. — Դեռ ևս առաքելական դարում անամուսական կեանքը զերադաս էր համարուել ամուսականից, ապացոյց՝ Պօղոս առաքեալի Կորնթացոց զրած Ա. Թուղթը (է. 1-2 և 8): Այս հայեացքը հետզհետէ զարդացաւ, և Դ. դարում այլ և այլ պատճառներով շատ տարածուեցաւ և կուսակեանքը մանաւանդ պատշաճ և զայել համարուեցաւ հոգեւոր դասին համար: Հետզհետէ տիեզերական Եկեղեցու մէջ յառաջ եկան կանոններ, որով բարձր հոգեւորականութեան արգելում էր ամուսնանալ, եթէ նա մինչև սարկաւագութիւն չէր ամուսնացել: Ե. դարում այս աշխարհահայեացքը պատուաստում է նաև մեր Երկրում, որին ամենայն հաւանականութեամբ նպաստում են նաև մեր քաղաքական կեանքի պայմանները. և ահա սկիզբ է առնում Հայ Եկեղեցում վանական կուսակրօն կեանքը, որ ապագայում մեր կեանքի քաղաքական, կուլտուր - կրթական և զրական ասպարհութերում խոչը դեր է խաղում: Վերջին տասնամետակներում յաճախ արծարծուել

է կուսակրօնութեան վերացման հարցը։ Այս հարցը արծարծուել է նաև 1917 թուի համագումարում և մտքերի երկու հոսանք յառաջ բերել։ Մի հոսանքը կողմանակից է կուսակրօնութեան վերացման, համարելով այն անբնական երեսոյթ և ուլտադրժութիւնը անխուսափելի, այլև այն հանդամանքը, որ ամուսնութիւնը սրբազործուած է Եկեղեցու կողմից և ամուսնացած եպիսկոպոսութիւնը ճանաչուած է թէ մեր և թէ արքեպերական Եկեղեցում։ Միւս հոսանքը, հակառակ վերոյիշեալին, պնդել է, որ բժշկական տեսակէտով անբնական և վասակար երեսոյթ չէ տնտեսուսնական կեանքը և ուլտադրժութիւնը վերացման հիմք չի կարող ծառայել, քանի որ նոյն երեսոյթը աւելի մեծ չափերով տեղ ունի նաև աշխարհիկ հոգեորականութեան և աշխարհականների մէջ։ Ժողովը որոշել է պահել կուսակրօնութիւնը։ Այս հարցի նկատմամբ կեղրոնական Յանձնաժողովի ատացած պատասխանները ևս ընդհանուր առմամբ կուսակրօնութեան պահպանման տեսակէտն են շեշտում, սակայն այստեղ ևս երկու հոսանք է Նշմարւում այլ ուղղութեամբ։ Մի հոսանքը պահանջում է նրանից բարձր ցենզ և առաջնորդական պաշտօններից դուրս պարտադիր է համարում նոյս մալը վանքում, և զիտութեամբ ու զեղարուեստով պարապելն անհրաժեշտ համապատասխան իրենց հակումների և պատրաստութեան։ Խակ միւս հոսանքը հակառակ է նորա պաշտօնավարութեան և կողմանակից է վերապահենելու նրան ձեռնադրութեան իրաւունք և Եկեղեցու ու աշխարհիկ հոգեորականութեան նկատմամբ հոգեոր տեսչութիւն, սակայն ոչ իշխողի՝ այլ բարոյական հեղինակ կութեամբ դիտովի և զեկավորի հանդամանքով։ Թւում է թէ վերջին տարիների փորձը անշուշտ բոլորին էլ բերած լինի այն համոզմունքին, որ կուսակրօն հոգեորականութիւնը անհրաժեշտ է Եկեղեցու գոյութեան պահպանութեան համար։

3. — Ամուսնական եւ ամուսնալուծական հարցեր. — Հայ Եկեղեցին, յիշեալ կանոնական հարցերի նկատմամբ այլ և այլ պատմական ժամանակաշրջաններում արել է ժողովական տարրեր որոշումներ՝ արձագանք տալով իշրական կեանքի պահանջներին, մասամբ եւս յարմարուելով քաղաքական իշխողների աղդեցութեան։ Ամուսնական (հաս և չհաս) խնդիրներով զբաղուել է որոշումներ են արել մեր Եկեղեցում մեզ յայտնի հետեւեալ ժողովները։ Աշտիշատ (365), Եահապիվան (447), Պարտաւ (768) և Երուսաղէմ (1651)։ Առաջին երկուսը թոյլատրել են Յրդ աստիճանի թէ արքնակցական և թէ ինաւ միական պսակներ։ Պարտաւի ժողովը՝ արենակցական 4րդ աստիճանի է Երուսաղէմինը՝ արենակցական 5րդ աստիճանի պսակը։ Պարզ է թէ կանոնական արգելք չկայ, որ Ամենայն Հայոց Հայրապետը այդ սահմանների մէջ կանոնական կոնդակներ արձակէ կեանքի պահանջների հետևանքով։ Յայտնի է, որ մեր Եկեղեցում 15րդ գարում խակ արենակցական Յրդ աստիճանի պսակներ անզամ չէին թոյլատրում, և կամ թոյլատրում էին ոչ յօրինակ այլոց։ 1917 թուի համագումարը որոշեց ինքը հանգուցեալ Հայրապետէն հաս համարել արենակցական 6րդ և խնամիական 4րդ աստիճանները և թոյլատրել անարզել կտարել։

Երջանկայիշտատակ Հայրապետը նախապէս բանակցելով Տանն Կիլիկիոյ Կաթուղիկոսի և Երուսաղէմի և Կ. Պոլսոյ Պատրիարքների հետ, նաև նկատի

առնելով նոր կեանքի պայմանները, 1922 թ. Նոյեմբերի 11ին արձակում է թ. 845 կանոնական կանդակը, որով թոյլարում է աղղակցական ճրդ և խնամիական գրդ աստիճանի պսակը, և վերացւում է հոգեոր ազգակցութեան ամէն տեսակ արգելքներ ամուսնութեան վերաբերմամբ։ Ներկայ կեանքը այս սահմաններից ենելու փորձեր չի անում, ուստի պէտք է պահել այդ սահմանը։

Գալով ամուսնալուծութեան և ամուսնալուծական հարցերին, Հայոց Եկեղեցին, պահպանելով Աւետարանի սկզբունքը, գուցէ և Եւտեղողաթեամբ Ռուսաց Եկեղեցու պղակտիկային՝ Պոլոժենիայի գոյութեան ընթացքում, ամուսնալուծութեան հիմք համարել է միայն և զիմաւորապէս ամուսնական ուխտի անհաւատարմութիւնը։ Գերազոյն Հոգեոր Խրիստովզ վերջերս միայն և այն ևս կեանքի ստիպողական պահանջների առաջ տեղի տալով՝ թեթևացրել է ամուսնալուծութիւնը, նաև այլ պայմաններ ամուսնալուծութեան հիմք ծառայեցնելով։ Այս հարցի նկատմամբ լաւագոյն կը լինի ընդունել Եահապիվանի ժողովի որոշումը, որով ամուսնութիւնը լուծելի է համարում հետեւել պատճառներով։ 1. Ամուսնական անհաւատարմութիւն։ 2. Ամուսնութիւն։ 3. Մարմական և հոգեկան արտաներ։ 4. Արքեցողութիւն։ 5. Անհաշտ քնաւորութիւն (ծհծ, կուր և եայն)։

4. — Նոր Տոմարի հարց։ — Նոր կամ Գրիգորեան Տոմարի գործածութիւնը Հայ Եկեղեցում ընդունելու հարցով կյամիածինը զրադուել է գեռ ևս 1918 թուի մեծ Յեղափոխութիւնից առաջ, և այս առթիւ յատուկ զրութիւն է ուղարկել Ռուսական Սինոդին, վերջնիս ծրագրներին, իրազեկ լինելու, նպատակով։ Բնականարար այս հարցի լուծումը արագացաւ, երբ ներկայ Պետութիւնը ընդունեց նոր տոմարը, որից յետոյ 1922 թուին Ռուսաց պատրիարքը նոյնպէս ընդունեց նոր տոմարը, որին հետեւ նաև Պրավոլաւ Եկեղեցու նիւղը՝ Վրաց Եկեղեցին։ Անա այս պայմանների մէջ դժուար պիտի լինէր Հայոց Հայրապետի համար Համամիութենական սահմաններում բոլոր միւս քրիստոնեաց Եկեղեցիներից անջատուել և մենակ առաջնորդուել են տոմարով, մանաւանդ թէ արտասահմանում Հայ գաղութներից սմանք վաղուց տրամադրութիւն էին ցոյց տուել նոր տոմարի անցնելու, եւ ահա 1923 թ. Նոյեմբերի 9ին արձակում է թ. 349 Հայրապետական Խոնդակը, նոր տոմարը ընդունելու մասին, և ըստ այնմ այդ թուից կազմում է կյամիածնի օրացոյցը նոր տոմարով Պմբախտարար, Հայրապետական Խոնդակի հրատարակուելուց անոմիշտապէս յետոյ, Ռուսաց Պատրիարքը, Ռուսև հաւատացեալ ժամովրդի պահանջի հետեանքով, գուցէ և Եւտեղելով Յոյներին, նաև անջել և յես էր կոչել իր կարգադրութիւնը։ Այդ իսկ պատճառով, Նոր Տոմարի գործածութեան անօրէնութիւնը ընդունելութիւն չի գտնում Համամիութենական սահմանների թեմերում, ուր Հայ ժողովուրդը Ռուս և Վրացի ժողովուրդների հետ սերտօրէն կապուած էր սովորոյթներով, ընտանեկան, վաճառականական և այլ հիմունքներով և սովոր էր Եկեղեցական տօները միասին կատարել։ Այս դժուարութիւնը ևս առաւել ակնբախ և զդալի է գտանուամ Ս. Զատկի տօնին, որ յիշատակուած ժողովուրդները վաղուց սովոր մն միասին աօնել և այժմ ստիպուած էին բաժան տօնել։ Նոր Տոմարն ընդունելու դժուարութեան առաջ կանգնած է և կանգնած

էլ պիտի մայ յատկապէս Ս. Երռուսաղէմը, Եկեղեցական իրաւունքների պահպանութեան նկատմամբ դժուարութիւնների մէջ շընկնելու համար։ Այս այս դժուարութիւնների առաջ կանգնած է Հայ Եկեղեցին տօմարական հարցի առթիւ, որի վրայ հրաւիրում է Ազգային Եկեղեցական ժողովի ուշադրութիւնը։

5. — Եկեղեցական միեմի փոփոխութեան հարց. — Այս հարցի առթիւ այլ և այլ տեղերից Հանգուցեալ Հայրապետի անունով խնդիրներ և միջնորդութիւններ են ստացուել, որով խնդրում է թոյլատրել հոգևորականութեան արտաքոյ Եկեղեցու և ծիսակատարութեանց կրելու աշխարհիկ սքեմ։ Սորան հակառակ կայ և մի այլ հոսանք, որ կարենոր է համարում պահել հոգևորական սքեմ։ Նկատի առնելով, որ դարերի ընթացքում հայ ժողովուրդը սովորել է իր հոգեւոր հօրը հոգեւոր սքեմով տեսնել և յարգանք ու արժեք տալ այդ սքեմին։ Գերազոյն Հոգեւոր Խորհուրդը կարծում է, «որ յարմար կը լինի պարտադրել հոգևորականութեան հոգեւոր սքեմ կրել Եկեղեցում, օրինակատարութիւնների, պաշտօնական հանդէսների և հանգամանքների ժամանակ, որից դուրս՝ արտօնիկ նոցա աշխարհիկ սքեմ կրել։»

6. — Ավախարիկ հոգեւորականութեան ապահովութեան խնդիր. — Հայոց Եկեղեցում ընդունուած սովորութեան համաձայն, աշխարհիկ հոգեւորականութիւնը իր պաշտօնավարութեան համար որոշ և հաստատուն վարձատրութիւն չի ստանում, այլ ապրում է օրինակատարութիւններից ստացած կամաւոր տուրքերով և զանձանակադրամով։ Վարձատրութեան այս եղանակը այլ ասպարէզներում չի կիրառուում, և ներկայ հասկացողութեամբ և քահանայութեան իսկ ըմբռնմամբ համարում է այդ ձեզ վիրաւորական և նուաստացուցիչ, որի պատճառով քահանայութիւնը յաճախ կորցնում է իր ներքին անկախութիւնը և Ենթարկում անհատ ծխականների քմահանոյքին։ Ուստի առաջարկութեան է ազնուացնել նիւթական վարձատրութեան ձեզ, ընդունել ուժի տրւչութեան սկզբունքը, որ որոշ տեղերում արդէն ընդունուած է։

7. — Պահմի վերացման հարց. — Այս հարցը կենքն ինքն կ լուծեր, քանի որ պահողների թիւը շատ է սահմանափակ դարձել և պահողներն էլ մեծ մասամբ ոչ իր ապրում, այլ իրեն սովորոյթ են պահում։ 1917 թուի համագումարը և Կեդրոնական Յանձնաժողովի ստացած պատասխաններն էլ նոյնն են պնդում և կողմանակից են պասի վերացման։ Գերազոյն Հոգեւոր Խորհուրդը կարծում է, որ պէտք է թողնել միայն Զատկի և Աստուածայայտնութեան տօների պասերը մի մի շաբաթ և Խաչելութեան յիշատակի նուիրուած Աւրբաթ օրուայ պասը, որով կը դադարի Օրէնքը զայթակղութեան աղքիւր գառնալէ ։ Պատերի կրծատմամբ ինքնին յառաջ է զալիս պսակի օրերի նոր ընդլայնման հարցը։ Այս խնդրի նկատմամբ առաջարկ կայ անխտիր ամէն օր պսակ կատարել։ Գերազոյն Հոգեւոր Խորհուրդը հնարաւոր է գտնում պսակի օրերի արգելքը վերացնել՝ համարելով արգելեալ օրեր միայն Ս. Զատկի և Ս. Ծննդեան շաբաթապասերը։

8. — Աստուածապատճեան լեզուն → Աստուածապատճեան կարգի հետ աստուածապատճեան լեզուն անցեալի ծնունդ է, որ իր ժամանակ ժո-

Դավրդին հասկանալի լեզու է հղել, բայց այժմ անհասկանողի է. ուստի և հայ սարակաց աղօթքը, որի նպատակն է ստեղծել ընդհանուր կրօնական տրամադրութիւն աղօթոզների մէջ և նոցա միացնել՝ չի ծառայում իր նպատակին: Այս հարցի նկատմամբ եղած առաջարկները, թարգմանել Ս. Գիրքը, շարական ները և աղօթքները՝ ցանկալի են, բայց չառ գժուար իրազործելի: Գերազոյն Հոգերո Խորհուրդը հնարաւոր է զանում թույլատրել, որ Ս. Գրքի որոշ հատուածները և Հայրերի թղթերը թարգմանաբար կարդացուին եղած թարգմանութիւններից օգտուելով: մինչև որ հնարաւոր լինի Ս. Գիրքը ամրույովին թարգմանած տեսնել:

Մինչև այժմ եկեղեցական բարենորոգութեան հարցն արծարծելիս մեծաւ մասսամբ նկատի է աւնուած քրիստոնէական կրօնի արտաքին արտայայտութիւնները և թիշ ուշադրութիւն է դարձուած նորա բովանդակութեան վրայ, հաւատացեալների կրօնական ապրումների ու զգացմուների վառ պահպանութեան վրայ: Սակայն այդ արտաքին արտայայտութիւնների բարեփոխութիւնը միայն ի գիճակի չէ կերպարանափոխելու մեր ժողովրդի կրօնական ըմբռումը, վերածնելու նրան նոզեպէս և ստեղծել առաջ նոր կեանք՝ քրիստոնէական նոր կենցաղ, որ բարենորոգութեան թուն նպատակը պիտի լինի:

Գերազոյն Հոգերո Խորհրդի տեսակէտառվ, այս վերջին ուղին հարթող միջոցները հետեւալներն են. — 1. Հիմնել մասնագիտական նոզերի բարձրագոյն դպրոց՝ տեսական և գործնական աստուածաբանական ծրագրով և ընտական դիտութիւնների ուսուցման լույն ծաւալով, որ առաջայ նոզերականացուն ձեռք բերէ քրիստոնէական և զիտական լոյն աշխարհահայեացք: Միաժամանակ ձեռք բերէ կրօնական ողի և խորը համոզանիք՝ քրիստոնէական բարոյական բարձր գաղափարների ճշմարտութեան և իր կենցաղով այդ աշխարհահայեացքի մարմացնողը հանդիսանայ կեանքի մէջ, դաստիարակիչ օրինակ ծառայելով իր համայնքին: Այլապէս մասած՝ նոր հոգերականութիւն ստեղծէ, ընդունակ՝ նոր կեանքի պահանջներին գոհացում տալու: 2. Քրիստոնէական ուսմունքը կենդանի խօսքի միջոցաւ իւրացնել տալ համայնքին՝ նրա մէջ քրիստոնէական սիրոյ ողին կենդանացնելու և կեանքում համապատասխան կենցակ տաեթել տան լու նպատակով: 3. Նպատակն կրօնա-բարոյական մնոյթ կրող գեղ պրուեսաւական երկերի զարգացման և կազմակերպել իիրակնօրեայ դաստիարակութիւններ և ծրագրուած զրոյցներ՝ մասնագ սերնդի և ընդհանրապէս հաւատացեալ հօտի կրօնաբարոյական դաստիարակութեան նպատակով: 4. Կազմակերպել համայնքի մէջ գթութեան և սիրոյ գործեր: 5. Հրատարակել աստուածաբանական ամսաթերթ և կրօնական շաբաթաթերթեր: 6. Վերականգնել նույիրակութիւններ, ազգային եկեղեցու միութիւնը պահպաններու, ի սփիւռս աշխարհի ցըռած գաղութանայութիւնը Մայր Աթոռի և Մայր երկրի — Հայրենիքի և հետ սերտօքն կան պելու նպատակով: Աւ վերջապէս, Ս. Եկեղեցու արտաքին ծիսական կարգերն ու արարողութիւնները նպատակայական կրօնամատմերով և մշակուած քաղցրալուր զեղարսւեստական երգով և երաժշտութեամբ վեհացնել: Ահա այն ժամանակին կամաց առաջարկ կամաց առաջարկ է աղօթքները աղօթքի մեջ գէպի արտաքին նկրքին ճշմարդացնել: